


2192

ՇԻՆԻՉ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՃՈՆ Ռ. ՄՈՒՑ

ԵՐԵՒԱՆ ԷՏԱ



Ա. ՊՈԼԻՍ

ՅՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՏԹԵՎՈՍՅԱՆ

1920

241
Մ-85

241
15-85

ՇԻՆԻՉ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՃՈՆ Ր. ՄՈԹ

ՇԵՐԻՈՒՏ ԷՏԻ

ԹԱՐԴՄԱՆ ՈՒԱԾ

Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութեան
Նիւ Եորքի Միջազգային Յանձնաժողովին Կողմէ
հրատարակուած Անզգիական բնագրէն

Կ. ՊՈԼԻՍ

ՑՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ՄԱՅԹԻՈՒՆԵԱՆ

1920

2010

4. 2001

ՇԻՆԻՉ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ
ՆԿԱՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՍՆ Ա.

Այս տետրակին թելադրութիւններն ուղղուած են անոնց որ կը փափաքին Յիսուս Քրիստոսի յայտաբարութիւնները փորձել և առօրեայ կեանքի մէջ զիտնալ Անոր զօրութիւնը նկարագրի շնութեան մասին։ Հիմնուած են անոնք բազմաթիւ երկրներու ամէն հասակէ մարդոց հաւաքական փորձառութեան վրայ և կը կարողացնեն մեղ՝ ըմբռնել Քրիստոնէական աշակերտութեան հնարաւորութիւնները։ Եւ օգտակար հանդիսացած են թէ անոնց որ տուածին անգամ կը դաւանին Անոր անունը և թէ անոնց որ կը փափաքին նորողել իր հետ իրենց հաղորդակցութիւնը։

1. Վճռապէս և կատարեկապէս լքենք ամէն ինչ որ բանականութիւն, խիղճ և փորձառութիւն վնասակար կամ երկբայելի կը ցուցնեն։ Ամբողջովին լքելու ենք ամէն ծանօթ մեղք, խոշոր ու աւերիչ մեղքերէն ըլլայ թէ փոքր կամ թաքուն կարծեցեալներէն։ Երբեք յոյս չկայ որ մէկը յաջողի յստակ զաղափար մը կազմել Քրիստոսի վրայ, կամ փորձն առնել անոր հրաշագործ զօրութեան, եթէ



38685-67

գլուխալով կը հաճողուրմէ ուեէ մեղքի գոյութեան՝ իր կեանքին մէջ։ Հաստատ որոշելու ենք լքել ամէն ունակութիւն կամ վարժութիւն, որ ծառայած է նկարագիրը տկարացնել կամ հոգեւոր տեսողութիւնն աղօտացնել։ Դիւցազնորմէն լքելու ենք ամէն սովորութիւն որ կամքը կը տկարացնէ կամ խիզը կը խանձէ։ Անվեհեր զգուշանալու ենք ամէն տեղէ, որ յաճախելով աւելի պիտի գժուարանայ մեր ճակատամարտը փորձութեան հետ, կամ աւելի անսարոյդ պիտի դառնայ մեր աղատումը մեր տարակոյսներէն։ Խուլ ըլլալու ենք այն ձայներուն և խօսակցութիւններուն որ անսուրբ յիշատակներ կ'արթընցնեն և միտքը ամօթալի երեւակայութիւններու մէջ կը թափառեցնեն։ Առ յաւէտ լքուելու են ամէն այնպիսի գիրքեր ու նկարներ որոնք միտքը պղծութեամբ կը լիցնեն ի մեզի արգելք կ'ըլլան իրականացնել մեր նոր ու բարձր գաղափարականներն ու յոյսիրը։ Չենք կրնար կրակի և վառօղի հետ խաղալ։ Անհրաժեշտ է որ զատուինք այն ընկերներէն ու ընկերակցութիւններէն որոնք անցեալին մէջ մեզ ետ պահած են և որոնք մեզի դժուարին, եթէ ոչ անկարելի, պիտի դարձնեն նոր շաւզին մէջ յարատեւել։ Մէկ խօսքով, հին կեանքի հետ մեր բոլոր կապերը խզելու ենք յայտնի և անվիճելի կերպով։ Արքան վճռական ու կտրուկ ըլլանք կեանսական այս կէտին վրայ, այնքան ստոյդ ու արագ պիտի յառաջանանք կատարեալ աղատութեան, յաղթութեան, հոգեւոր զիտութեան և զօրութեան շաւզէն։ Բազմաթիւ ցեղերու և երկիրներու պատկանող հաղարաւոր երիտասարդներու փորձառու-

թիւնը վճռապէս կ'ապացուցանէ թէ մարդուս շատ աւելի դիւրին է ամբողջովին անձնատուր ըլլալ Քրիստոսի քան կիսովին։ Քրիստոս ինքնինք չյայտներ և իր զօրութիւնը չնազորդեր այն մարդուն որ իրաւախոն կ'ըլլայ։ Ինք պնդեց թէ ոչ ոք կրնայ երկու տէրոջ ծառայել։ Ուստի ամէն գնով այրենք մեր ետեւի կամուրջները, յաւիտեան խզուինք անսորնացուցիչ անցեալին և իր բոլոր յուսախարութիւններէն, ձախողանքէն ու կորուստէն։ Խզուելի ետեւ ալ՝ մոռնանք զայն և վազենք ճշմարիտ պատութեան երկիրը։

2. Ակամինք անմիջապէս ուղիղ ունակութիւնը կազմել Սուրբ Գիրքն ուսանելու, որպէս զի ամուր ու օգտակար նկարագրի և հաւատքի տիրանանք։ Ոչ ոք կրնայ զօրեղ ու բազմարդիւն մարմին ունենալ և զայն քաջառողջ պահել առանց կանոնաւոր ու բաւական մնունդ ստանալու և այդ մնունդը պատշաճապէս իւրացնելու։ Ոչ մէկ մարդ կրնայ իմացական ըմբռնողութեամբ ու արտադրիչ կարողութեամբ զարգանալ՝ առանց իր միտքը կանոնաւորապէս զբաղեցնելու իմացական դժուարին հարցերով։ Նոյնքան ճշմարիտ է թէ մարդիկ չեն կարող բարոյական ու կրօնական գործունէութեամբ և հոգեւոր ներհայեցողութեամբ զարգանալ՝ առանց կանոնաւորապէս ու կատարելապէս ուսումնասիրելու Քրիստոնէութեան սկզբնատիպ զիրքերը։ Այսպիսի ուսումնասիրութիւն հարկ է՝ մեզի ցոյց տալու համար մեր կեանքերուն կարօտութիւններն ու կարելութիւնները։ Էական է խզի ձայնն արթընցնել ու կենդանի պահել։ Առանց անոր, կամ-

Քին անկարելի է շարժիլ ու գործել՝ յաջողապէս պայքարելու համար փորձութեան հետ ։ Այդ զիրքերուն ուսումնասիրութեան պահուն կրնայ մէկը լաւագոյնս մշակել համաշափ, պարզ ու վստահելի նկարագիր և ուշիմ բնութիւն։ Սուրբ Գրոց ուսումը, մանաւանդ կեղրնական մեծ դէմքին, Յիսուս Քրիստոսի, ուսումը, լոյսի ամենամեծ հեղեղը կը սփոէ մեր տարակոյսներուն կամ կրօնի վերաբերեալ անպատճախանի հարցումներուն վրայ։ Մեր միտքերը Սուրբ Գրոց սկզբունքներուն ու օրինակներուն վրայ աշխատցնելով լաւագոյն պատրաստութիւնը կը տեսնենք մեր ընկերներուն ու ազգին օգտակարապէս ծառայելու կեանքի մը համար։ Այդ պիտի պատրաստէ մեզ ծշմարիտ առաջնորդի պաշտօնին, որպէս չէ կարող պատրաստել զիրքերու ուրիշ ուեէ հաւաքածոյ։

Քրիստոսը ճանչնալու և Անոր ազգեցութեան հմայքին տակ մտնելու փափաք ու նպատակ ուսնեցողներուն համար ամենակարեւոր է որ ամէն օր քիչ մը ժամանակ տան Քրիստոսի և անոր վարդապէտութիւններուն, նաև Սուրբ Գրոց միւս գիրքերուն ուսումնասիրութեան։ Այս կեանք ընդլայնող ունակութիւնը կազմելու համար ամէն օր որոշ ժամանակ մը յատկացնելու ենք անոր։ Եթէ որոշ կամ հաստատուն ժամանակ մը չունենանք, փորձառութիւնը կը ցուցնէ թէ բնաւ չենք ունենար յաճախ։ Աշխարհի ամէն կողմը մարդիկ փորձով սորված են թէ այս նպատակին յարմարագոյն ժամին է անբաղդատելիօրէն իւրաքանչիւր օրուան ճիշտ սկիզբը։ Այս կը բացատրէ յարաճուն

տարածումը Առաւօտեան Պահու զբութեան, որ է ամէն օրուան գէթ առաջին կէս ժամը, առանց բացառութեան, Սուրբ Գրոց ուսումն նուիրել աղօթքով ու խորհրդածութեամբ։ Զկայ ունակութիւն մը որ ասոր չափ օգտակար ըլլայ մեզի բարյապէս ու հոգեւորապէս։ Իրօք, միւս միջոցներուն օգտակարութիւնը մեծ մասամբ կախում պիտի ունենայ այն եռանդէն ու հաստատամտութենէն, զորս ի յայտ կը բերենք այս կենսական վարժութիւնն հաստատելու և պահպանելու համար։ Այս առիթով պէտք է շեշտել թէ մեր հոգեւոր յառաջդիմութեան նպատաւոր պիտի ըլլայ լաւագոյն գիրքեր կարդալ Քրիստոնէական վարդապետութեան և Քրիստոնէական փորձառութեան վրայ, նաև Քրիստոնէական կեանքի ու սկզբունքներուն անձնական, ընկերային ու ազգային հարցերու պատշաճեցուցման վրայ։ Բարի Քրիստոնէաներու կենսագրութեան ընթերցումն ալ չատ խրախուսիչ է Քրիստոսի հետեւիլ սկսողներուն։ Բայց այս միւս գիրքերէն ոչ մին, նոյն իսկ լաւագոյնը, առաջնութիւն ստանալու է Քրիստոնէութեան սկզբնատիպ գրութիւններուն, այն է Սուրբ Գիրքին, ուսումնասիրութեան վրայ, Սուրբ Գիրքին՝ որ միւս բոլոր կրօնական օգտակար գրականութեան ներշնչումն ու տիրող գաղափարներն հայթայթած է։

Յ. Ամէն օր քիչ մը ժամանակ տալու ենք առանձնական աղօթքի։ Ամէն դարու և ամէն երկրի մէջ ծշմարիտ աղօթքի սովորութիւնը զիսաւոր սատար եղած է հոգեւոր յառաջդիմութեան։ Ոչ ոք երբեք կատարեալ յաղթութիւն տարաւ իր փոր-

ձութիւններուն վրայ կամ գոհացուցիչ լոյս ստացաւ իր կրօնական շփոթութիւններուն մէջ առանց աղօթքով Աստուծոյ նայելու սովորութեան։ Աստուծած մեր երկնաւոր Հայրն է, և աղօթքն է պարզապէս Անոր հետ խօսիլ։ Մեզ շահագրգող ամէն բանի — մեր բարոյական պայքարներուն, մեր իմացական դժուարութիւններուն, մեր անձնական յոյսերուն, երկիւղներուն և տենչերուն — վրայ Անոր խօսելու ունակութիւնը մշակելու ենք։ Մինչեւ իսկ եթէ մէկը չհաւատար աղօթքի, պարտի աղօթել սա պարզ պատճառով թէ աղօթքն է բան մը որ կրնայ ստուգուիլ մի միայն աղօթելով։ Որքան դժուար ըլլայ մարդու մը՝ աղօթել, նոյնքան պարտի աղօթել։ Նոյն իսկ եթէ երբեք չդիւրանայ աղօթել, տակաւին պէտք պիտի ունենանք այս վարդութեան և երթալով պիտի օգտուինք անկէ։ Լաւ պիտի ըլլայ ուշի ուշով կարդալ աղօթքի վրայ գրուած օգտակար գիրքեր։ Ա՛լ աւելի լաւ պիտի ըլլայ ուսումնասիրել Քրիստոսի սովորութիւնը և տեսութիւնը աղօթքի նկատմամբ և աղօթքի գերը նախնի Քրիստոնեաներու կեանքին մէջ։ Նոր Կտակարանով կրնանք իսկոյն սկսիլ այս երկու կարեւոր նիւթերուն ուսումնասիրութիւնը։ Ուր որ կարելի է, օրը գէթ մէկ անգամ առանձնանալու ենք առանձին աղօթքի համար, եթէ չկայ տեղ մը ուր կրնանք առանձնանալ այս նպատակով, կըրնանք աղօթել մինչ առանձին կը քալենք գիշերը բաց երկինքին տակ, կամ ցերեկը մեկուսի վայր մը։ Կրնայ նաև մէկը միտքով մեկուսանալ սորվիլ և այսպէս աղօթել, մինչ կը գտնուի բաղմութեան

մը մէջտեղ կամ ընկերոջ մը հետ կ'աշխատի սենեակի մը մէջ։ Այս կը թելագրէ կարեւորութիւնն ու անհրաժեշտութիւնը օրը քանիցս անգամ Աստուծոյ նայելու սովորութեան, ո'ւր ալ ըլլանք և ի՞նչ պարագաներու մէջ ալ գտնուինք։ Եթէ մէկը ժամը չորսին փորձուի, մինչև պառկելու ժամն սպասելու չէ Աստուծոյ օգնութիւն և զօրութիւն խնդրելու համար։ Ապա թէ ոչ պիտի պարտուի հաւանու էն։ Ամէն ժամանակ Աստուծոյ ներկայութիւնն ու մօտութիւնը յիշելու և առաջնորդութեան, զօրութեան ու ընկերակցութեան համար Անոր նայելու այս սովորութիւնն է որ յաղթական կեանքի և ուրիշներու վրայ օգտակար ազգեցութեան դադանիքը կը բացատրէ։

4. Շատ փափաքելի է որ Քրիստոսը հասկնալու և Անոր օգտակարութեան փորձն առնելու մէջ ամենամեծ յառաջդիմութիւնն ընել ուզողը ոչ միայն անձամբ ուսումնասիրէ Սուրբ Գիրքը և առանձինն աղօթէ, այլ և համանման փափաքներով վառուած ընկերներու խումբի մը միանայ կրօնական կենսական ինդիրներու ուսման ու քննութեան համար։ Կ'ուզենք յիշեցնել թէ ի՞նչ առաւելութիւն ունի Սուրբ Գրոց ուսանողներու խըմբակներ կազմել՝ միաբանութեամբ ուսումնասիրներու համար ուզգակի այն գիրքերը, որոնք Քրիստոսի և Անոր թագաւորութեան տարածման վրայ կը խօսին։ Այս է գիտական աշխատանոցի մեթոսը, զօր կը գործածեն այլազան ազգերու պատկանող յառաջադէմ ուսանողները։ Եւ այս է որ մեծ արդիւնքներ տուած է ուսման այլազան ճիւղերու

մէջ : Մենք ուսման ամէն ուրիշ ծիւզի մէջ օգուտ կը քաղենք մասնագէտներու առաջնորդութենէն : Այս ամենակարեւոր նիւթին ուսման մէջ գերազանցօրէն օգտակար պիտի ըլլայ առաջնորդուիլ խրատով ու թերաղրութիւններով իմաստուն ու վստահելի անձի մը , որ , իր հաշուին , խորհրդով ու կեանքով , աշխատած է այս նոյն գետնին վրայ զոր մենք ուսումնասիրել կը բաղձանք : Մեր իմացական ու հոգեւոր վստահութիւնը զրաւող այլօրինակ ուսուցիչ կամ առաջնորդ մը առատ լոյս պիտի սփոք մեղ շփոթեցնող խնդիրներու վրայ , որոնց պատասխանէն այնքան բան կախեալ է : Բաց ասափ , Սուրբ Գրոց ուսման համար միացող ուսանողական խմբակի այս զրութիւնը կը նպաստէ մեր ուսումնասիրութեան շահեկանութեան և կատարելութեան : Ուստանողները պիտի խթեն իրարում մտքերը և ճոխացնեն իրարու փորձառութիւնը : Կրնան նաև իրարու մեծ օգնութիւն ընծայել նկարագրի պայքարներու մէջ և զիրար անշահախնդրական ու հերոսական ծառայութեան մղելու մէջ : Ուստափ , երբ մեղի պատեհութիւններ ներկայանան կենաքի , ճակատագրի և ազգեցութեան վերաբերեալ այս ամսնամեծ խնդիրները միաբանութեամբ ուսումնասիրող խմբակներ կազմելու , ամէն մէկս բոլոր սրաով այդ իմբակներուն միանանք և բոլոր մեր կրցածն ընենք քաջալերելու համար մեր ընկերները որ նոյնպէս ընեն :

5. Որչափ կարելի է՝ մտերմօրէն միանանք Քրիստոսի այն հետեւողներուն , որոնք եռանդագին ու խղճմտօրէն Անոր հնազանդած ըլլալով մե-

ծագոյն յառաջգիմութիւնն ըրած են նկարագրով ու օգտակար ծառայութեամբ Քրիստոսի նմանելու մէջ : Հաւատոյ մթնոլորտ ըսուած բան մը կայ և մեծ մասամբ կը գտնուի այնպիսիներու ներկայութեան մէջ , որոնք ամէնէն աւելի ծանօթացած են Քրիստոսի : Անձեր կան , որոնց քով մեղի կը դիւրանայ հոգեւոր բաներ հասկնալ և մեր հասկցածներուն մէջ հնազանդելու քաջալերութիւն ստանալ : Մենք ստիլողական պէտք ունինք ամէն օգնութեան զոր երբեք կրնանք ձեռք բերել ունէ աղբիւրէ : Զգրկենք մեղ այն մեծ օգուտէն , որ կու զայ Քրիստոսն անձամբ ճանչցողներուն հետ սերտ ընկերակցութենէ : Այս կը յիշեցնէ Ուսունողներու Քրիստոնէական Ընկերակցութեան , եթէ կայ ձեր գողէճին կամ ժողովրդին մէջ , արտօնութիւններէն օգտուելու օգտակարութիւնը : Այս կը չեւտէ նաև Քրիստոնէական Եկեղեցին կարեւորութիւնը : Ո՞րչափ կարեւոր է որ ուսումնասիրնենք Աստուածային այս հաստատութիւնը և հասկնանք թէ ի՞նչպէս կրնայ մէկը օգտուիլ անոր առանձնաշնորհներէն և անոր քրիստոնէավայել գործունէութիւններուն մատնակցիլ : Քրիստոս կը ճանչնար անհատ մարդիկը : Կը ճանչնար նաև մարդկութիւնը : Հետեւապհու իր կրօնը անհատական չէ միայն , այլ ընկերային եւս : Ինք որոշ ցոյց տուաւ թէ մէկը չկրնար ճշմարիտ Քրիստոնեայ ըլլալ՝ իր նմաններէն մեկուսանելով : Միայնակ կենալ փորձողն է որ կ'ինայ : Բարեբախտաբար ամէն երկրի մէջ Քրիստոսի անկեղծ աշակերտներ ու հետեւողներ կը գտնուին , որ չքնար արտօնութիւն կը համարին

կ'ուղղեն ճամբան վհստողներուն՝ սկսիլ անմիջապէս ուրիշներու վրայ խորհիլ և անոնց օգնել աշխատիլ. Այս խրամաք թէ՛ փորձառութեան համաձայն է և թէ՛ հոգեբանութեան, որոնք կը սորվեցնեն թէ մեր կրօնական նոր տենչերն ու մզումները պիտի մեռնին, եթէ չարտայայտենք զանոնք: Քրիստոս եկաւ հոչակել առ Աստուած և առ ընկեր սիրոյ նոր ու սքանչելի օրէնքը: Իր իսկ կեանքին մէջ մարմնացուց իր վարդապետութիւնն ու պատուէրը: Պարտեցու մարդոց բարիք ընելով: Եթէ կ'ուղենք մենք հասկնալ իր միտքը և մանել իր հրաշալի բայց ստոյդ կարողութիւններուն ազգեցութեանն տակ, պէտք է որ համակրինք իրեն, ջանալով ուրիշներու արամազելի ինչ որ մենք սորված ենք, փոյթ չէ՛ թէ ո՛քան քիչ ըլլայ այն: Այսպէս պիտի կրնանք կեանքի մէջ արտայատել սիրոյ նոր օրէնքը, որով պիտի կառավարութինք: Քրիստոսը և անոր ճշմարտութիւնը վհստողներ շատ քիչ անդամ չտոին իրենց վարձքը, եթէ կատուեցին այս անշատիններական սկզբունքն ու բնուազը: Մեր ամէն կողմը պատեհութիւններուն մատուցուած անապահութիւն ընկունելու, հապա սպասաւորութիւն ընկունելու: Իր կրօնը անշահախնդրական է բացարձակապէս, և կրնայ լաւագոյնս ստուգուիլ այնպիսիններէ, որ ուրիշներու ծառայութեան կը նուիրուին անշահախնդրութեամբ, և թերեւս այնպիսիններէ միայն: Կ'ուրժէ գիտել թէ անոնք որ ընդարձակագոյն փորձառութիւնն ունեցած են Քրիստոսի անկեղծ ուստանողները Անոր առաջնորդելու և ծանօթացնելու մէջ, առանց բացառութեան խրամ և յորդոր

հաւատարիմ ըլլու գՔրիստոս ճանչնալ ջանացողներուն և բարեկամութեան ճշմարտագոյն պարտականութիւնը կատարել անոնց, ինչ որ իրարուօգնել է կեանքի ամենասխրին բաներուն մէջ: Առանձինն չկուռինք: Առանձինն չխարիսխինք: սկեպտականութեան ու անհաւատութեան բաւիլներուն մէջ: Ո՞հ, ինչ զինզակ է առանձնութիւնը այդպիսի պայմաններու տակ և պայքարին անյաջողութիւնը զրեթէ որչափ անխուսափելի: Սիրով ու բոլոր հոգւով ընդունինք, մանաւանդ, բարեկամական հրաւելքներն ու ընկերակցութիւնն այնպիսիններու, որոնք Յիսուսի օրինակին հետեւելով և Անոր հրամաններուն հստակեցնելով յուցած են թէ Անոր բարեկամներուն ներքին շրջանակը կը կազմեն ճշմարտապէս:

6. Զանանք օգնել ուրիշներու: Աշխարհի ամէն կողմը բազմութիւններու կողմէ հաստատուած ուշագրաւ իրողութիւն մէ թէ Քրիստոս ինքընք ամէնէն աւելի կը յայտնէ անոնց որ ինքընքնին կը մոռնան՝ ուրիշներու ծառայել ջանալով: Ինք «չեկաւ սպասաւորութիւն ընդունելու, հապա սպասաւորութիւն ընկունելու» իր կրօնը անշահախնդրական է բացարձակապէս, և կրնայ լաւագոյնս ստուգուիլ այնպիսիններէ, որ ուրիշներու ծառայութեան կը նուիրուին անշահախնդրութեամբ, և թերեւս այնպիսիններէ միայն: Կ'ուրժէ գիտել թէ անոնք որ ընդարձակագոյն փորձառութիւնն ունեցած են Քրիստոսի անկեղծ ուստանողները Անոր առաջնորդելու և ծանօթացնելու մէջ, առանց բացառութեան խրամ և յորդոր

տրուի ամէն բարի բան վայելելու : Մինչ պատես հութիւն ունինք և մինչ կը զարգանանք փորձառութեամբ , Սուլք Գրոց ուսանողներու դասեր ստանձնենք , մանաւանդ գեռատի մեր ընկերներուն և դպրոցականներու մէջ : Լիովին գործադրինք Մեծ Եղբօր գաղափարը , որու համաձայն ուրիշներու օգտակար ըլլալ փափաքող ամէն անձ կ'ընտրէ ուրիշ անձ մը որ մասնաւոր կարօտութիւն ունի իր համակրալից ու խոհական տչակցութեան , և գործնականուպէս կը բարեկամանայ անոր , ամէն պարագայի մէջ անոր օժանդակելով և զայն դէպի յարածուն զօրութեան ու աղգեցութեան կեանք մը առաջնորդելով : Նա մանաւանդ հաւատարմութեամբ ու քաջարատութեամբ վկայ ըլլանք Քրիստոփի , ջանալով Անոր գիտութիւնը և Անոր ճշմարտութիւնը տարածել ամէն առիթով : Անձամբ խօսուցելով , պատշաճ զիրքեր ու գրքոյներ տարածելով և հրապարակային ուղերձներով ծանօթացնենք ու հոչակենք այս սքանչելի Փրկիչը : Այս և ամէն ուրիշ միջոցներով , զորս սիրոյ անշահախնդիր հնարիմացութիւնը կը թելադրէ , աշխատինք որ ուրիշներ մեզի միանան նոր շաւզին մէջ և մեզի հետ անցնին աղատութեան , արգարութեան և անշահախնդրութեան մարզերը : Առանց երբեք տարակոյմի , գործող Քրիստոնեան է որ զօրտոր Քրիստոնեայ է , զարգացող Քրիստոնեայ է , Քրիստոսը ճշմարտապէս ներկայացնող Քրիստոնեայ է :

7. Արթուն և ժիր ըլլանք փութով հասու ըլլալու և դիմոդրելու համար կարգ մը փորձու-


թիւններու , որոնք անվրէպ մեր վրայ պիտի յարձակին : Հաղարաւոր փնտողներու լոյն փորձառութեան յենլով էտկան կը համարինք որ Քրիստոսի հետեւելու փափաքու ու նպատակ յայտնողներ պատրաստուին արիտար զիմագրաւել այդ փորձերուն ու փորձութիւններուն՝ առաջին իսկ վայրկեանին երբ կը ներկայանան անոնք : Մեր այս մեծ նպատակը յայտնելէն քանի մը օր , կամ թերեւս քանի մը ժամ , յետոյ փորձութիւն կրնայ գալ մեզի սա մտածմոն ձեւով . «Միալ չգործեցի ես Քրիստոսն ուսումնասիրելու և Անոր հնագանդելու նպատակ յայտնելով :» Երբ փորձիչն այս հարցումը ներկայացնէ , անմիջապէս սա հարցումն ուղղեցիք գուք ձեզի . «Ի՞նչ ապացոյցներ կան թէ սիալ գործեցի :» Ո՛քան շատ խորհինք այս հարցման վրայ , այնքան լիովին պիտի համոզուինք թէ սիալ չգործեցինք մենք : Պիտի չկրնանք միտք բերել խղճի ու դատողութեան գոհացում առող ուեէ ապացոյց թէ սիալ գործեցինք՝ այն որոշումը տալով : Միւս կողմէ , եթէ բաւական մտածենք , պիտի կրնանք քանի մը որոշ ու զոհացուցիչ ապացոյցներ գտնել թէ մենք այն որոշումը տալով ուղիղ բանն ըրինք : Ուստի այդպիտի հարցում մը մեզ չմոլորեցնէ , և խարուելով չլքենք մեր որոշումը : Կամ , թերեւս քանի մը ժամէն պիտի փորձուինք՝ մեր ընկերներուն ծաղրին ու երգիծանքին ենթարկուելով : Անոնք կրնան անարգական ու զայրացուցիչ քննաղատութիւններով և չարամիտ թելադրանքներով ջանալ ետ կեցնել մեզ մեր բարձր նպատակէն : Հա՞րկ է ըսել թէ այս մին է ամէնէն ան-

վայել ու վատ բաներէն զոր մարդ մը կրնայ ընել : Զկայ բան մը աւելի արհամարհելի քան արարքն անոր , որ անձամբ որոշում մը տալու և յարգելու բարոյական քաջութիւնը չունի և կը փորձէ ուրիշները վհատեցնել կամ տկարացնել այդպիսի ձեռնարկներու պահուն : Ծաղրելու և նոխանելու համար քաջութեան պէտք չկայ բնաւ : Բայց անա ինչ որ ամենաբարձր քաջարատութիւն կը պահանջէ . Բարկութիւնը և լեզուն զսպել այսպիսի գրգռումներու դէմ յանդիման , և անխռով յարատեել Աստուծով տրուած բարի որոշման մէջ : Քանի քանի անգամներ այսօրինակ անձնազապութեան և բարի ընթացքի մէջ այսօրինակ յարատեութեան պտուղն եղած է ծաղրազներուն ու արհամարհողներուն Քրիստոսը փնտոել տալ լրջօրէն ու Անոր հետեւի :

Ալա շատերս լուրջ ընդգիտութիւն և թերեւս հալածանք պիտի կրնաք ազգականներու և մտերիմ բարեկամներու կողմէ : Կրնանք ճնշում կրել բուն իսկ համայնքէն , որ կը չանայ չնչել ամէն անհատական ճեններէցութիւն և անձնական ազատութիւն : Դրեթէ ամէն երկրի մէջ անհամար անգամներ այսպէս եղած է Քրիստոսի ծանօթութիւնը և ծշմարտութիւնը տարածելու զործին մէկ շրջանին մէջ : Այսպէս եղաւ երբ Ինք սուաշին անգամ յայտնուեցաւ մարդոց մէջ : Յայտնի քարոզեց Ինք թէ անոնք որ կ'ուզեն իրեն հետեւիլ՝ խիստ ընդդիմութիւն և բուռն հալածանք կրել ակնկալելուն : Ինք երբեք իր սովիները չծածկեց աշակերտ շահելու համար : Երբեք կոչ չուղղեց մարդոց վատ զգացումներուն , այլ՝ անոնց զիւցազնութեան :

Իմացաւ թէ մարդոց ու ազգերու օգտակար իր սկզբունքները զործադրելու համար ճշմարիտ հերոսներ ունենալու էր իրեւ աշակերտ : Սորվեցուց թէ իրեն հետեւողներուն երբեմն հարկ պիտի ըլլայ թողուլ ոչ միայն տուն ու երկիր , այլ և հայր , մայր , եղբայրներ և քոյրեր : Օն , ուրեմն , արժանի հանդիսանանք այս Փրկչին ու Առաջնորդին : Հաւատարիմ ըլլանք ճշմարտութեան , հետեւանքն ինչ ալ ըլլայ : Փութանք մեր սերուցնդին և ազգին խորագոյն կարօտութիւնը լեցնել ճշմարիտ հերոսներ ըլլալով , կարող՝ տառապելու և ի հարկին նոյն իսկ մարտիրոսանալու :

Մեղմէ ոմանց՝ փորձութիւնը կրնայ զալ սա խօսքին ձեւով . «Քրիստոսի հետեւելու և հնազանդելու որոշումն ծանուցանելէս ի վեր զգացումներս փոխուած չեն : Տարբերութիւն մը չեմ զգար :» Քրիստոսի քարոզութիւններուն կամ բանականութեան պատգամներուն մէջ բան մը չկայ որ կ'ըսէ թէ տարբերութիւն զգալու ենք : Սակայն շատ բան կայ որ կ'ըսէ թէ տարբեր կերպով զործելու ենք : Զգացումը շատ անապահով առաջնորդ է և անկարեւոր : Մենք Աստուծոյ կամքն ընելու ենք ուրիշներու ծառայելով և Քրիստոսի նմանիլ աշխատելով , տարբերութիւն զգանք թէ չզգանք : Անհրաժեշտ չէ որ մէկը ուղիղ գործելու համար ուղիղ զգայ : Ուստի չառաջնորդենք մեր կեանքերը փոփոխական մեր զգացումներով , որոնք մեծ մասամբ խառնուածքի խնդիր են , այլ՝ Քրիստոսի անփոփոխ օրինակով ոչ վարդապետութիւններով : Միեւնոյն ժամանակ պէտք է չեցանել թէ Քրիստոնէա-



կան պարտականութեան և արտօնութեան շաւղին մէջ համբերութեամբ յարատեւելուն պառզն է ամենախորին և ամենագոհացուցիչ խնդութիւն :

Քրիստոսի ճամբէն ընթանալու մնջ նպատակը կազմողներէն ոմանց պիտի գայ սա բառերով արտայայտուող երկիւղը . «Կը վախնամ որ պիտի չկրնամ տոկալ» Անշուշա չենք կրնար տոկալ մեր անձնական զօրութեամբ : Զկայ մէկը որ կարենայ ամենաբարձր ու ամենասուրբ նպատակներու կառչի առանց իր ունեցածէն աւելի մեծ զօրութեան : Եթէ մարդիկ կարենային դիմանալ, եթէ կարենային ինքնին ըլլալ ինչ որ պարտին ըլլալ, Քրիստոսի համար հարկ չէր ըլլար մարդոց մէջ զալ իրեւ բաւարար Փրկիչ ու ամենակալ Տէր : Մեր մէջ մեր պարտականութիւնը կատարելու կարողութիւն չգտնուելուն համար է աշարդապէս որ մենք Աստուածային Փրկչին կողմը զարձած ենք այսքան իմաստութեամբ և որոշած ենք զինք ճանչնալ, որպէս զի իր զօրութեան փորձառու ըլլանք : Թերեւս, կամ հաւանօրէն, իւրաքանչիւրիս պիտի գայ կըրկին ու կրկին մեզ պաշարող հին փորձութիւնը, այն որ այնքան անգամներ յաղթած է մեզի : Հոս շեշտենք որոշակի և ազգուապէս թէ անհրաժեշտ չէ որ Քրիստոսի հետեւելու որոշումը տուող ունէ անձ վերստին տեղի տայ իր մասնաւոր փորձութեան կամ ուրիշ ունէ փորձութեան : Սակայն եթէ այդ անձը մոռացութեան վայրկանի մը մէջ, կամ արդէն իսկ շեշտուած էական բաները զանց ընելուն հետեւանքով, զայթի և իյնայ, թող յիշէ իսկոյն թէ իր անկումին պատճառը Յիսուս Քրիստոսի չուղին մէջ մնանք, վասն զի, երբ Անոր կընկերակցինք, չենք կարող երեեք իյնալ :

այլ Յիսուս Քրիստոս չունենալը, Ուստի անմիջապէս թող Քրիստոսի վերադառնայ թողութիւն խնդրելու համար և թող որոշէ իր դժբախտ ու անտեղի փորձառութենէն օգտուիլ և այլեւս նոյն տեղը չինալ : Թող կրկնապատկէ իր հակողութիւնը : Թող Քրիստոսի հետ կապակցութեան կէտերը բազմապատկէ վերոյիշեալ միջոցներն ու մեթոնները զործածելով և այսպէս Քրիստոսի պատշաճ պատեհութիւնը ընծայելով որ բոլորովին փրկելու իր կարողութիւնը ցոյց տայ : Պէտք է քաջալերուիլ յիշելով թէ ամէն մարդիկ փորձուած են ու կը փորձուին մեզի նման և թէ անհամար բազմութիւններ Քրիստոսով յաղթելու գաղանիքը սորված են ամէն երկրի ու ցեղի մէջ : Այս յաղթութիւնն հետեւարար մեզի համար է : Վերջին ծայր լուրջ ըլլանք այս Քրիստոսը մեր անձնական Փրկիչն ընելու մեր առաջարութեան մէջ : Սորվինք անմիջապէս դիմադրել չարին առաջին թելազրութիւններուն, երբ մեր մտքին ներկայանան անոնք, վասն զի այս է ճակատամարտի մեծ գաշտը : Սորվինք անմիջապէս Քրիստոսի նայիլ : Մեր ժամերն ու վայրկեանները լիցնենք հակազդող հրապոյներով, նոր ու սուրբ շահեկանութիւններով, և անշահախնդրական խորհուրդներով ու այլասիրական ծրագիրներով : Յարատեւենք այս և իրեւ էական ցուցուած ամէն ուրիշ բաներ ընելու մէջ, որպէս զի Քրիստոսի շաւղին մէջ մնանք, վասն զի, երբ Անոր կընկերակցինք, չենք կարող երեեք իյնալ :

8. Վերջապէս մեր աչքերն ուղիղ կողմ յառած պահենք : Զնայինք անցեալ ճախողանքնե-

բուն և թերութիւններուն, վասն զի այդ կ'արթընցընէ ախտաժէա խորհուրդներ ու վճատեցուցիչ յուշեր: Զնայինք մեր փորձութիւններուն, վասն զի այդ կրնայ մեզ ջլատել և միտքը այնչափ լեցնել փորձութեամբ որ այս վերջինը պատեհութիւն գտնէ աճելու, և ի վերջոյ մեզի ընել տալու բուն այն բանը որմէ խոյս տալ կը բաղձանք: Զնայինք մեր նեղութիւններուն ու երկիւղներուն, ի բաց առեալ երբ սաստիկ կը ճնշեն մեր վրայ, այն ատեն և ոչ թէ իրեւ քար գայթակդութեան նկատելու համար զանոնք, այլ իրը քար քայլափոխի՝ ի գործ հրաւիրելու համար մեր բովանդակ ոյժը բարձունքներ մագլելու մեր ձեռնարկին մէջ: Զնայինք մինչեւ իսկ մեր յաղթանակներուն, որ ըլլայ թէ հպարտանալով ու ինքնագոն ըլլալով կորսնցնենք մեր կապակցութիւնը յաղթական գորութեան աղբիւրին հետ: Զնայինք մեր անձերուն, վասն զի դառն փորձառութեամբ սորված ենք թէ մեզմէ անհունապէս մեծ բանի մը կարօտ ենք յաղթութեան և աղատութեան կեանքեր ունենալու համար: Զնայինք ուրիշներու, ի բաց առեալ երբ իրենց Քրիստոնէավայցել օրինակով ու հոգեսր խմատուն խրատներով յարմարութիւն ունին մեզ Քրիստոսի առաջնորդելու, կամ երբ մեզի պատեհութիւններ կ'ընծայեն մեր անձերը մոռնալու՝ իրենց բարոյական ու հոգեւոր մեծամեծ կարօտութիւնները հոգալով:

Հապա ո՞ւր նայինք, ո՞ւր սեւեռենք մեր աչքերը: Յիսուս Քրիստոսի, և միայն Անոր վրայ, որ մեր հաւատքին ոչ միայն Առաջնորդը և Ակսողնէ, այլ և Կատարողն ու Կատարելագործողը: Անոր

նայելով պիտի փոխուինք նկարագրով, որ օր ըստ օրէ աւելի պիտի նմանի Անոր նկարագրին, մեր սիրտերը պիտի յորդեն հարազատ ուրախութեան ու գոհունակութեան զգացումներով, պիտի մըտնենք Աստուծոյ որդիներու փառաւոր ազատութեան մէջ, և մեր կեանքերն հետզհետէ աւելի օգտակար պիտի ըլլան ամէնուն որանց հետ յարաբերութիւն կ'ունենանք և պիտի ըլլան զօրութեան աղբիւր մը մեր ազդին ու մեր ժամանակակիցներուն:

ՄԱՍԻՆ Բ.

Այս տետրակին առաջին մասին մէջ անհատի մը աշակերտութեան անձնական պայմաններուն վրայ խօսեցանք: Հիմա պիտի քննենք անոր ընկերային յարաբերութիւններն ու պատասխանատուութիւնները: Թէ՛ անձնական և թէ՛ ընկերային տարբերն անհրաժեշտ են: Ոչ ոք կ'ապրի իրեն համար միայն: Ամէն ոք ի հարկէ՝ ուրիշներու վրայ կ'ազդէ ի բարին կամ ի չարն: Ուզենք թէ չուզենք, օժանդակ կամ արգելք կ'ըլլանք մեր շուրջ գտնուողներուն: Անձնասէր ու ստորին մարզիկ միայն կրնան պատասխանատուութիւն ու պարտականութիւն չճանչնալ ընկերներու հանդէպ: Զենք կարող նկարագիր կազմել կամ Աստուծոյ հետ հաղորդակցութիւն հաստատել, եթէ ծուռ կամ անձնասիրական յարաբերութեան մէջ ենք մեր ընկերներուն հետ: Եթէ մարդոց հանդէպ ուզիդ զիրքի մէջ չենք, չենք կրնար ուզիդ զիրքի մէջ ըլլալ Աստուծոյ հանդէպ:

1. Հրապարակային Դիմումներն և Նշանակութեալը

Ամէն ոք պարտականութիւն ունի ընտանիքի ,
բարեկամներու , ընկերութեան և երկրի հանդէս :
Մարդոց ամենամեծ ուսուցիչները , մարդարէները ,
բարեկարգիչները և առաջնորդներն անոնք եղած
են որ իրենց համար չէին ապրեր , այլ ուրիշներու
համար , մինչ պատմութեան մէջ երեւցող ամէնէն
ստորին մարդիկն անոնք եղած են որ ամէնէն անձ-
նաւէր ու վատ նկարագիրներն ունեին : Եթէ Յի-
սուս Քրիստոսի ճշմարիտ աշակերտներն ըլլանք ,
կը փրկուինք ծառայելու համար , ինչպէս Յիսուս
սորվեցուց Լեռան Վրայի Քարոզով և ամբողջ իր
կեանքով , «Դուք էք երկրի աղը . ապա եթէ աղը
իր համը կորսնցնէ , ինք ինչո՞վ պիտի աղուի . ան-
կէ ետեւ բանի մը չգար , միայն թէ դուրս ձգուե-
լու և մարդոց ոտքին տակ կոխուելու : Դուք էք
աշխարհի լոյսը . քաղաք մը որ լեռան վրայ կեցու
է , չկրնար պահուիլ : Ու ճրագը չեն վառեր և զներ
գրուանի տակ , հապա աշտանակի վրայ , և լոյս
կու տայ բոլոր տանը մէջ եղողներուն : Այնպէս թող
լուսաւորէ ձեր լոյսը մարդոց առջեւ , որ տեսնեն
ձեր բարի գործերը , ու փառաւորին ձեր Հայրը որ
երկինքն է» Մատ . Ե . 13 - 16 : Քմածին վարդա-
պետութիւն մը չէ այս , այլ՝ վարդապետութիւն
մը , որ անհրաժեշտ է բանին բնութենէն : Քրիստո-
նէութիւնը Աւետարան է , բարի աւետիս : Աւե-
տիսն հաղորդուելու է , բարի լուրը արուելու է :
Եւ լուրն է Աստուծոյ մէջ կեանք ունենալ Յիսուս
Քրիստոսով : Քրիստոնեան է անձ մը Ոստուծոյ

այս կեանքն ունի Քրիստոսով : Սակայն ամէն ճըշ-
մարիտ կեանք ինքզինք կը վերարտաղրէ : Ճշմար-
տութեան վկայելու և կենաց աւետիսը ուրիշներու
տալու անհրաժեշտութիւնը ակնյայտնի է բանաւոր
պատճառներով , որոնց մին է սիրոյ տիեզերական
ու անսահմանափակելի բնութիւնը : Ինչպէս լոյսը
իր իսկ բնութենէն պիտի փայլի , նոյնպէս սէրը
ինքզինք պիտի նուրիէ մեր շուրջ գտնուող կա-
րօտեաններուն : Այն որ չփայլիր՝ խաւար է և ոչ
լոյս , և այն որ ուրիշներու տալու կամ օգնելու
փափաք չունի՝ ճշմարիտ սէր կամ կեանք չունի :

Տալու փափաքի կողմէ սիրոյ ոչ միայն տիե-
զերականութիւնը , այլ և բոլոր մարդոց տիեզերա-
կան ու նոյնանման կարօտութիւնը կենաց այս Ա-
ւետարանին , հրամայական պատճառ է որ Քրիս-
տոսը դաւանինք : Մարդիկ Աստուծոյ համար ստեղ-
ծուած են , և հոգին հանգիստ չգտներ մինչեւ
որ Անոր մէջ չանգչի : Մեր շուրջ ամէն ոք ճըշ-
մարտութեան կը կարօտի այնքան որքան մենք ,
և Աստուծ ճշմարտութիւնը սորվողներէն կը պա-
հանջէ բոլոր իրենց կարելին ընել՝ ուրիշներու սոր-
վեցնելու համար զայն :

Դարձեալ , Քրիստոսի տիեզերականութիւնը
իրեւ միակ էակը որ կարող է լիովին գոհացնել
մարդկային մէն մի սիրոյ՝ հրամայական պատճառ
է որ ուրիշներու հաղորդենք իր պատզամին աւե-
տիսը : Ինքն է ամէն կեանքի լրացուցիւը , ամէն
անձի կարօտութեան զարմանը , բոլոր մեր ի գե-
րեւ ելած յոյսերուն , տենչերուն և զաղափարա-
կաններուն լրումն ու կատարումը : Ինք կու գայ

ոչ թէ աւրել, այլ կատարել, լիովին լեցնել ամէն պարապ կեանք: ծշմարտութեան ամէն պատգամ, քաղաքակրթութեան, զիտութեան, գրականութեան, բարոյականութեան և կրօնի ամէն յառաջդիմութիւն նոյն միջոցով եկած է մնդի, այնպիսին իրու ձեռամբ որ իրենց ունեցածէն բաժին կը հանեն չունեցողներուն և զիտեն ճշմարտութիւնը պատմել չզիտցողներուն: Իր ընկերները սիրող մարդը կը նմանի կենդանի ջրոյ գետի մը, որ օրհնութիւն կը սփոէ արեւատոչոր արտերուն: Իր ընկերներուն վրայ սէր և հոգ չունեցողը նման է Մեռեալ Ծովուն, որու կայուն ու դառն ջուրերուն մէջ ոչ մէկ կենսաւոր կարող է ապրիլ: Ո՞ր կեանքը կը վարենք մենք:

Պարտելով աշակերտ ժողվող, սորվեցնող, քարոզող և բարիք ընող Քրիստոսի իսկ պատուէրն ու օրինակը մեզ կը հրաւիրեն Իրեն հետեւիլ ուրիշներու օգնելու մէջ: Ամէն հոգիի յարզը, մեր շուրջ գտնուող ամէն անհատի կարօտութիւնը, յաւելուածական հրաւէր է այս գործն ընկերու: Մեր երկրին կարօտութիւնն այսօր մեզ կը հրաւիրէ նոյն անշահամենդրական ծառայութեան: Այսպէս կը տեսնենք ահա թէ ինչո՞ւ Քրիստոս կը հրաւիրէ մեզ որ ուրիշներ մասնակից ընենք այս կեանքին, երբ կ'ըսէ: «Արդ ով որ մարդոց առջեւ զիս կը դաւանի, ես ալ զանիկա պիտի դաւանիմ իմ Հօրս առջեւ՝ որ երկինքն է: Եւ ով որ մարդոց առջեւ զիս կ'ուրանայ, ես ալ զանիկա պիտի ուրանամ իմ Հօրս առջեւ՝ որ երկինքն է: Մի կարծէք թէ ես երկրի վրայ խաղաղութիւն ձգելու եկայ. խաղա-

ղութիւն ձգելու չեկայ, հապա սուր. վասն զի եկայ մարդը իր հօրմէն զատելու, ու աղջիկը իր մօրմէն, ու հարսը իր կեսուրէն: Եւ մարդուն թըշնամիները իր ընտանիքը պիտի ըլլան: Ան որ հայրը կամ մայրը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ. և ան որ աղան կամ աղջիկը ինձմէ աւելի կը սիրէ, ինձի արժանի չէ....: Ան որ իր անձը կը գանէ, պիտի կորսնցնէ զանիկա. և ան որ իր անձը ինձի համար կը կորսնցնէ, պիտի գանէ զանիկա»: Մատ. Ժ. 32—39:

Քրիստոս մեզ կը հրաւիրէ ամէն բան թողուկ և իրեն հետեւիլ: Ինք կ'ուղէ մեր ամբողջ սիրուը: Իրաւախոնութիւն անկարելի է: Ամբողջ անբաժան ընութեան իր պահանջը քմածին ողահանջ մը չէ, այլ՝ ընական ու անխուսափելի հոգեբանական օրէնքի մը համաձայն: Փորձառութեան ու ամբողջ կեանքի մէջ տառապէս ճշմարիտ է թէ սկզբունքի հարցերու մէջ յաջող իրաւախոնութիւն անկարելի է: Ինչպէս կ'ըսէ Քրիստոս, «Հապա եթէ քու աչքդ պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ: Բայց եթէ քու աչքդ վաս է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ: ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ալ այն խաւարը ո՛չափ է: Մարդ մը չկրնար երկու տէրոջ ծառայութիւն ընել. վասն զի կամ մէկը պիտի տաէ և միւսը սիրէ, կամ մէկուն պիտի յարի և միւսը պիտի արհամարհէ: Զէք կրնար ծառայել Աստուծոյ ու մամոնայի: Մատ. Զ. 22—24: Այսպէս իրաւախոնութիւն անհար է: Զենք կրնար կեանք մը գաղտնի ապրիլ և ուրիշ մը հրապարակաւ, մէկը միւսը խօսքով ու գոր-

ծով, մէկը տան, իսկ միւսը շուկայի մէջ: Բաժանում ըլլալու չէ բարոյականութեան ու կրօնի, հաւատքի ու կենցաղի միջև: Եթէ ճշմարտութիւնը գտած ենք, զայն խորհինք, խօսինք ու գործադրենք կեանքի մէջ գաղանի թէ մարդոց առջև:

Խաչը առնել, ինչպէս կը պատուիրէ Քրիստոս, կը նշանակէ Աստուծոյ կամքն ընել և, եթէ հարկ ըլլայ, մեր կամքը զոհելով: Խաչը, Քրիստոսի համար, կը նշանակէր իր մահուան գործիքը: Կը ներկայացնէր հալածանք և ցաւ ու առերեւոյթ պարտութիւն և մահ: Այսու հանդերձ ըստ Ան, «Այն գաւաթը զոր Հայրը ինծի տուաւ՝ պիտի չխմն մ զանիկա»: Ինք կը ճանչնար Աստուծոյ կամքը՝ նոյն իսկ իր կեանքին գնով ընելու անխուսափելի անհրաժեշտութիւնը, վամն զի մարդիկ փրկելու աւելի գիւրին միջոց չկար: Ինչպէս ըստ Ինք, «Եթէ ցորենին համը հողին մէջ իյնալով չմեռնի, ինք մինակ կը մնայ, ապա եթէ մեռնի, չատ արդիւնք կը բերէ»: Ցովէ. ԺԲ. 24: Ուրիշներ փրկելու համար Քրիստոս պարտէր իր անձը զոհել: Քանի որ չարութիւն կայ աշխարհի մէջ, զոհը մարդկային կեանքի տիեզերական օրէնք է:

Սրգարութիւն սիրող ու Աստուծոյ համար ասլրող մարդիկ պիտի տառապին մեղաւոր աշխարհի մը մէջ: Մարդկութեան ամենամեծ բարերարները ամէնէն աւելի հալածուած են: Զարչարուելով մաքրուեցան իրենց նկարագիրները, և զոհուելով կարող եղան իրենք մարդոց ծառայել և զանոնք բարձրացնել: Սոկրատ մահուան դատապարտուեցաւ՝ ճշմարտութիւն սորվեցնելուն համար: Ազնիւն

Տանթէ տքսորուեցաւ: Սավոնարոլա, Ֆիրէնցայի մեծ բարեկարգիչը, այրուեցաւ ցիցի կապուած: Աշբասիրան Տեհեմաք իր կեանքը զոհեց՝ սուսերամարտիկներու վայրագ հանդէսներուն դէմ բողոքելու համար կրկէսին մէջ նետուելով: Բայց իր մահուամբ առ յաւէտ վերջացաւ Հռոմէական կայսրութեան այդ արատը: Կալիլէօ հալածուեցաւ նոր ճշմարտութեանն համար զոր ինք քարոզեց: Քոլոմպոս, որ նոր աշխարհի մը բացաւ մարդոց առջև, բանսով ու շղթայով վարձատրուեցաւ: Ճէնըր, որու մեծ գիւտը ծաղկախտի պատուհասէն զրեթէ փրկեց մարդկային ազգը, սաստիկ ընդդիմութեան բախեցաւ իր գործին համար: Այսպէս վարձատրած են միշտ մեղաւոր մարդիկ իրենց մեծագոյն բարերարները: Հրապարակային դաւանութեամբ, նոյն իսկ զոհուալութեան գնով, ճշմարտութեան անզըրդուելի վկայ կանգնիլ, ահա միակ կերպը՝ որով կը բնանք մեր ընկերները փրկել կամ այն բարենորոգումները կատարել, որոնց պէտքը կ'զգացուի խորապէս ամէն կողմէ: Ճշմարիտ հայրենասէրն այն է որ պատրաստ է տառապանք կրել: Յիսուս Քրիստոս ըստ Ա. «Դուք իմ վկաներս պիտի ըլլաք»: Անոր ճշմարիտ հետեւողներուն և աշակերտներուն իւրաքանչիւրը վկայ է: Դատական այն վկան որ ճշմարտութիւնը գիտէ բայց ծածուկ կը պահէ, մինչ ուրիշներ կը տառապին, կամ անհաւատարիմ վկայ է կամ վատ: Մենք պարտական ենք վկայել ճշմարտութեան, եթէ պիտի փրկենք մեր երկիրը: Այսպէս յայտնի է թէ հաւատարիմ ըլլալ ուզող մէկը պարտաւոր է զՔրիստոս դաւանիլ հրապարակաւ:

2. Եկեղեցոյ Անդամակացութեան Կարեւուրութեանը

Յիսուս Քրիստոսի անկեղծ աշակերտը, որ զայն ընդունած է իրբեւ իր Աստուածային Փրկիչն ու Տէրը, Քրիստոնէական Եկեղեցւոյ անդամ ըլլալու է որչափ շուտ որ հնար է: Եկեղեցին Քրիստոսէ և անոր աշակերտներէն հաստատուեցաւ Քրիստոսի գործը աշխարհի մէջ յառաջ տանելու համար իրբեւ ընկերուկցութիւն մը, և Անոր թագաւորութիւնը յառաջ տանելու համար երկրի վրայ ճանչցուած մարմինն է: Այն կը պահէ մարդոց առջեւ ընկերային թէ անհատական կեանքի Յիսուսնան գաղափարականը: Այն կը հոչակէ նաև զՅիսուս իրբեւ կենդանի անձնաւորութիւն մը, որու հետ կենսական կապակցութեան չնորհիւ կրնան անոնք իր գաղափարականն իրականացնելու յոյսը տածել: Այնպէս իրարու կը կապէ մարդիկը որ զիրար փոխադարձարար կը քաջալերեն Քրիստոնէական հաւատքը ծաւալելու համար: Մենք կը ճանչնանք կազմակերպութեան, միութեան և համերաշխութեան յարգը մարդկային կեանքի ամէն ուրիշ ճիւղի և ասպարէզի մէջ: Պէտք է որ այդ տռաւելութիւններէն օգտուինք Քրիստոսի դատը յառաջացնելու մէջ: Այն որ որոշած է Քրիստոսի անկեղծ աշակերտ ըլլալ և Անոր հնազանդիկ աւելի դիւրին պիտի գանէ Քրիստոնէական իր նոր կեանքը Եկեղեցւոյ մէջ ապրիլ քան գուրսը: Պատճառն ակներեւ է: Եկեղեցին իր մէջ ունի բաղմաթիւ անձեր որ եռանդագին կ'աշխատին Քրիստոնէական կեանք վարել: Մարդ մը համալսարան կ'երթայ,

որպէս զի իր մտաւոր բնութեան զարգացման նպաստող իմացական միջավայրի մը մէջ մտնէ: Ճիշտ նոյն սկզբունքը կը յարգուի կրօնական կեանքի մշակման պահուն: Եկեղեցին մէջ կը գտնուի Քրիստոնէական զարգացման յատուկ միջավայրը:

Ոմանք Եկեղեցին հեռու կը մնան, վասն զի շատ անտեղութիւններ և թերութիւններ կը տեսնեն անդամներէն ոմանց վրայ, կամ վասն զի Եկեղեցին կեանքին ու մեթուններուն մէջ ուրիշ բաններ կը տեսնեն որ անդո՞ւցուցիչ են: Այս է սակայն ուրիշ զօրաւոր պատճառ մը Եկեղեցին մտնելու, վասն զի ամէն կազմակերպութիւններու և շարժումներու պատմութիւնը կը ցուցնէ թէ անոնք լաւագոյնս կը բարւոքուին ձեռամբ մանաւանդ ներս գտնուողներուն քան այնպիսիններու որ զուրպէն քննադատութիւններ .ու թելազրութիւններ կ'ընեն: Եթէ այսինչ տեղերու Եկեղեցւոյ անդամները խեղճ ու անազգեցիկ են, այդ յաւելուածական պատճառ է լոկ որ անոնց ի սպաս գնենք մեր գաստիարակութիւնն ու վարչական տաղանդները: Ճիշտ յնչպէս Հոռոմէական կայութեան և ուրիշ երկիրներու մէջ Եկեղեցին ընկերութեան ընկճուած ու խոնարհ խաւերուն մէջ սկսաւ բայց շուտով շահեցաւ իմացական զօրութեան ու ազգեցութեան տէր մարդոց հաւատարիմ հպատակութիւնը, Նմանապէս այսօր ամէն երկրի մէջ ժամն հասած է, երբ ազգային կեանքի ուսանողներն ու առաջնորդները կը հրաւիրուին իրենց տաղանդներն ի սպաս գնել Եկեղեցին: Եկեղեցին սահմանուած է ըլլալ անշահախնդրական հաստատութիւն մը:


Աշխարհի մէջ կը գտնուի մարդոց և ընկերութեան ծառայելու համար։ Կարօտ է օգնութեանը իւրաքանչիւր պարկեշտ Քրիստոնեայ աշակերտի, որ բուռն բաղձանք ունի ոչ միայն լաւագոյն կերպվ վայելելու իր կեանքը, այլ և իր լաւագոյնն ընելու յօդուտ աշխարհի։ Պէտք է շնչել թէ Քրիստոնեայ աշակերտ մը որչափ զօրաւոր ու անկախ զգայ ինքզինք՝ նոյնչափ ինք պէտք կ'ըլլայ Եկեղեցին, որպէս զի բազմութիւններու օգնէ իրենց կարօտութեան մէջ։ Ուեէ անկեղծ մարդու օգտակար է իր նպատակն յայտնել հրապարակաւ։ Եկեղեցին լաւագոյն պատեհութիւնը կ'ընծայէ ատոր համար։ Ուրիշներ մեր օրինակին խրախոյսին պէտք ունին։ Ուստի մեզի և ուրիշներու զլանալու չենք հասարակաց այս ամենակարեւոր օգտին համար գործակցելու շահը։ Եկեղեցին նշանակութիւնը և օգուտները լաւ ըմբռնելու համար մարդերեւակայելու է թէ արդիւնքն ինչ պիտի ըլլար, եթէ իւրաքանչիւր մարդ գործէր առանձին ապրիլ իր Քրիստոնէական կեանքը։ Որքան խորհինք մեր կեանքերուն պէտքերուն ու կարելիս թիւններուն և, Քրիստոսի անունով, երկրի վրայ կատարելի ընդարձակ գործին վրայ, նոյնքան լիովին պիտի համոզուինք թէ անհրաժեշտ հարկէ որ Յիսուս Քրիստոսի բոլոր անկեղծ ու հաւատարիմ աշակերտները միաբան մնան իր Եկեղեցին մէջ։

Ոչինչ կընայ բռնել չնորհաց այս Աստուածընտիր միջոցին տեղը։ Յիսուս Քրիստոս, իր օրուան Աստուածային ընկերութեան հետ իր լարաբերութեան մէջ, ոչ միայն վարդապետութեամբ, այլ և

օրինակով անսխալելի կերպով ցոյց տուաւ այն ընթացքը որու պարտէին հետեւիլ իր աշակերտները։ Տեսանք թէ ինք համակերպեցաւ մկրտութեան պահանջին, և կը յիշենք թէ ինք հաստատեց Բնչոր հիմա կը ճանչցուի Եկեղեցւոյ մէջ իրը Սուրբ Հաղորդութիւն։ Յիսուսի ոչ մէկ ճշմարիտ աշակերտ կարող է չնորհքով ու Քրիստոսի զիտութեամբ և անշահամնդիր ծառայութեան համար կարողութեամբ զարգանալ յուսալ, առանց օգուտ քաղելու այդ սրբազն խորհուրդներուն անզին արտօնութիւններէն, որոնք կու զան Քրիստոսի, իր անփառ քարի, վրայ հիմուած Եկեղեցին հետ առնչութենէ։ Մարդկային ոչ մէկ միջոց, ո՛րքան ալ կարեւոր ըլլայ, զոր օրինակ Ուսանողներու Քրիստոնէական Ընկերակցութիւնը, Քրիստոնէական այլեւայլ եղբայրակցութիւններ կամ ուրիշ ուեէ կազմակերպութիւն, կարող է Քրիստոնէական Եկեղեցւոյ տեղը բռնել ուեէ չափով։ Բարեբախտաբար Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութեան նման ընկերութիւններ իրենքիրենք Եկեղեցւոյ ծառայ կը նկատեն և ոչ փոխանորդ։ Իրենք անոր պաշտօնները չեն կատարեր, այլ միայն կ'աշխատին անոր ազգեցութիւնը զօրացնել ու տարածել։ Եկեղեցին կոճղն է, իսկ այս կազմակերպութիւններն ու շարժումները՝ անոր ճիւղերը։ Մարդկային բարելաւման ծառայող Քրիստոնէական բոլոր իրավէս կարեւոր շարժումներն ու ձեռնարկները իրենց ուժն ու կենսունակութիւնը կ'ստանան Քրիստոնէական Եկեղեցւոյ հետ իրենց յարաբերութենէն։ Հետեւապէս Քրիստոնեայ աշա-

կերտը, ուրիշ ի՞նչ ալ զանց ընէ, թող զանց չընէ խսկոյն ամէն անդրաժեշտ քայլեր առնել՝ լրացնելու համար Քրիստոնի Եկեղեցւոյն գործօն ու արդիւնաւոր մէկ անդամն ըլլալու պայմանները:

Այս տետրակին մէջ ըսուածները կարդացողներէն ամէնուն ալ մեծ պէտքն է եղրակացուցիչ խորհութիւն կամ նկարագրի վճռականութիւնն է Եղրակացուցիչ խորհութիւն կամ նկարագրի վճռականութիւնն է կատարելապէս խորհութիւն սկզբունքներուն ու իրողութիւններուն վրայ և ապա որոշ եղրակացութեան մը զալ: Իսկ նկարագրի վճռականութիւնն է ներկայացած խնդիրները լուծելու ունակութիւնը: Մարդու մը կեանքին մէջ չկայ աւելի մեծ վտանգ կամ տկարութեան աղբիւրքան խնդիրներու լուծումը երկարաձգելու և իրաւախոհ ըլլալու ունակութիւնը: Այդ կարելի չդարձներ երբեք զօրաւոր բնութեան մը կազմութիւնը կամ կրօնական գոհացուցիչ փորձառութեան մը ստացումը: Յիսուս Քրիստոս իր հրատարակային պաշտօնէութեան սկիզբէն մինչև վերջը շեշտեց կրօնի մէջ կամքի զորձածութեան աւագ կարեւուրութիւնը: Ճանապարհ, ազատ անցք տալու ենք սա սկզբունքին, զոր ինք այնքան որոշ ու ազդուրաներով յայտարարեց, թէ ան որ կ'ուզէ ընել՝ պիտի զիտնայ: Մեզմէ ամէն մէկը, բոլոր սրանվ ու ամէն գնով, հաստատ թող որոշէ թէ փութով ու զիւցազնաբար ի գործ պիտի գնէ հոս ցոյց ալրուած մէն մի միջոց: Հիմա է ընդունելի ժամանակը: Հիմա է քրիութեան օրը: Հիմա է գործի ժամը այնպիսի խնդիրներու նմանին որինք մեր յաւիտենական ճակատագրին կ'ազդեն:



ՀՀ Ազգային գրադարան



NL0029119

Դրքոյկիս մէջ յուզուած խնդրով շտ-
 հազրգոռւողներուն ջերմապէս կը յանձնաբարուին
 հետեւեալ զիրքերը .

	Դահ.
Քրիստոնեական Նկարագիր	20
Քրիստոսի Կեանքը (լարակազմ)	17.50
Յիսուս Քրիստոսի Վարքը	12.50
Առաջնորդ Նոր Կտորականի	15
Աւետարանին Պատմականութիւնը	5

Գին 5 դահեկան

Մատթէոսեան Գրատուն, Պայպը Հառոս, Աթամպուլ